

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

**B ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2003թ. ապրիլի 14-ի թիվ 782/2003
/ԵՀ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

Նավերի վրա օրգանոտին բաղադրությունների արգելման վերաբերյալ

(ՊՏ L 115, 09.05.2003թ., էջ 1)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

		թիվ	էջ	ամսաթիվ
<u>M1</u>	Հանձնաժողովի 2008 թվական հունիսի 13-ի L 156 թիվ 536/2008/ԵՀ կանոնակարգով		10	14.06.2008թ .
<u>M2</u>	Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 L 87 թվականի մարտի 11-ի թիվ 219/2009 (ԵՀ) կանոնակարգով		109	31.03.2009թ .

B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ թիվ 782/2003 /ԵՀ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Նավերի վրա օրգանոտին բաղադրությունների արգելման վերաբերյալ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
հաշվի առնելով Եվրոպական համայնքը հաստատող Պայմանագիրը եւ, մասնավորապես,
80-րդ հոդվածի 2-րդ մասը,
հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից տրված առաջարկը,
հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի
եզրակացությունը,

խորհրդակցելով Տարածաշրջանների կոմիտեի հետ,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն,

Քանի որ

1) Համայնքը լրջորեն մտահոգված է նավերի վրա որպես հակաբուսապատման համակարգեր օգտագործվող օրգանոտին բաղադրությունների՝ միջավայրի վրա վնասակար ազդեցությամբ եւ, մասնավորապես՝ եոբութիլանագ /ԵոԲԱ/ ծածկույթների ազդեցությամբ,

2) Համայնքի անդամ պետությունների ներկայությամբ եւ Ծովային միջազգային կազմակերպության հովանու ներքո 2001թ. հոկտեմբերի 5-ին անցկացրած Դիվանագիտական համաժողովի (Հակաբուսապատման համակարգերի (ՀԲՀ) համաժողով) ընթացքում ընդունվել է «Նավերի վրա վնասակար հակաբուսապատման համակարգերի վերահսկման վերաբերյալ» միջազգային կոնվենցիան,

3) ՀԲՀ կոնվենցիան շրջանակային կոնվենցիա է, որով թույլ է տրվում, սահմանված ընթացակարգերի համաձայն, արգելել նավերի վրա օգտագործվող վնասակար հակաբուսապատման համակարգերը, եւ հաշվի է առնվում Ռիոյում՝ Միջավայրի եւ զարգացման վերաբերյալ հայտարարության մեջ արտահայտված նախազգուշական սկզբունքը,

4) ՀԲՀ կոնվենցիան այս փուլում միայն արգելում է նավերի վրա օրգանոտին բաղադրությունների կիրառումը,

5) կիրառման համար սահմանված ամսաթվերը ներառվել են ՀԲՀ կոնվենցիայում. 2003թ. հունվարի 1-ին՝ նավերի վրա օրգանոտին բաղադրությունների կիրառումն արգելելու համար եւ 2008թ. հունվարի 1-ին՝ նավերի վրա օրգանոտին բաղադրությունները ոչնչացնելու համար,

6) ՀԲՀ կոնվենցիան ուժի մեջ է մտնում միայն աշխարհի տոննաժի առնվազն 25 տոկոսը ներկայացնող առնվազն 25 պետությունների վավերացումից 12 ամիս անց,

7) անդամ պետությունները հնարավորինս շուտ պետք է վավերացնեն ՀԲՀ կոնվենցիան,

8) ՀԲՀ կոնվենցիայի արագ վավերացման մասով անդամ պետությունների նկատմամբ հնարավոր ամենալավագույն մոտեցումը պետք է դրսեւորվի: Հարկավոր է վերացնել նման վավերացումն արգելող որեւէ խոչընդոտ,

9) ՀԲՀ համաժողովը, տեղյակ լինելով, որ մինչեւ 2003թ. հունվարի 1-ը մնացած ժամանակը կարող է չհերիքել ՀԲՀ կոնվենցիան ուժի մեջ մտցնելու համար, եւ ցանկանալով, որ օրգանոտին բաղադրությունները 2003թ. հունվարի 1-ից այլեւս չուղարկվեն, ՀԲՀ համաժողովի թիվ 1 բանաձեւում խնդրել է, որ Ծովային միջազգային կազմակերպության անդամ պետություններն անեն հնարավորինս ամեն ինչ՝ ՀԲՀ կոնվենցիայի իրականացմանը պատրաստվելու համար, եւ կոչ է արել համապատասխան արդյունաբերական ընկերություններին զերծ մնալ մինչ այդ օրը օրգանոտին բաղադրությունների մարկետինգից, վաճառքից եւ կիրառումից,

10) Հանձնաժողովը ՀԲՀ համաժողովից անմիջապես հետո ընդունեց Հանձնաժողովի 2002թ. հուլիսի 9-ի 2002/62/ԵՀ հրահանգը, այն իններորդ անգամ հարմարեցնելով որոշ վտանգավոր նյութերի եւ պատրաստուկների (օրգանոստանիկ բաղադրություններ) մարկետինգի եւ օգտագործման վրա սահմանափակումների վերաբերյալ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի եւ վարչարարական դրույթների վերաբերյալ 76/769/ԵՏՀ Խորհրդի հրահանգի I հավելվածի՝ սկսած 2003 թվականի հունվարի 1-ից, անկախ երկարությունից, բոլոր նավերի վրա հակաբուսապատման համակարգերում օրգանոստանիկ բաղադրությունների մարկետինգն ու օգտագործումն արգելելու համար,

11) ՀԲՀ համաժողովի թիվ 1 բանաձեռի լույսի ներքո, եւ ՀԲՀ կոնվենցիայում նշված ամսաթվերին, ամբողջ Համայնքում եւ հարակից ծովերում նավերի վրա օգտագործվող ԵՌԲԱ ծածկույթի վրա ընդհանուր արգելք ապահովելու համար օրգանոտին բաղադրությունների միջոցների իրականացումը պահանջում է հավելյալ քայլեր,

12) կանոնակարգը նպատակահարմար իրավական գործիք է, քանի որ այն նավատերերին եւ անդամ պետություններին պարտադրում է ամբողջ Համայնքում միաժամանակ, նույն ձեւով, ուղղակիորեն եւ կարճ ժամանակահատվածում իրականացնել ճշգրիտ պահանջներ: Սույն Կանոնակարգը, որով միայն արգելվում են օրգանոտին բաղադրությունները, չպետք է ՀԲՀ կոնվենցիայի կրկնօրինակը լինի,

13) սույն Կանոնակարգը չպետք է ազդի 76/769/ԵՀՀ հրահանգում սահմանված որոշ վտանգավոր նյութերի եւ պատրաստուկների (օրգանոստանիկ բաղադրությունների) մարկետինգի եւ օգտագործման սահմանափակումների վրա,

14) ԵՌԲԱ ծածկույթների ընդհանուր արգելման վերաբերյալ անորոշությունը չի ընդունվում համայնքային մակարդակում. համաշխարհային փոխադրման արդյունաբերությունը, որը պետք է ծրագրավորի նավերի պահպանումը, տեղեկացվում է հստակորեն եւ ժամանակին, որպեսզի 2008 թվականի հունվարի 1-ից ԵՌԲԱ ակտիվ ծածկույթներ կրող նավերն այլեւս չթույլատրվեն Համայնքի նավահանգիստներում,

15) երրորդ երկրները, մասնավորապես՝ եթե չեն կարող օգտվել գերազգային կանոնակարգի ավելացված արժեքից, կարող են իրենց համապատասխան ազգային օրենսդրությամբ իրավական եւ տեխնիկական դժվարություններ ունենալ՝ սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելու օրվանից իրենց նավերի վրա ԵՌԲԱ ծածկույթների կիրառման արգելքը պարտադրելու հարցում: Սույն Կանոնակարգում ԵՌԲԱ ծածկույթների կիրառման արգելքը կասեցվում է երրորդ պետության դրոշի ներքո նավարկող նավերի համար, սկսած 2003 թվականի հուլիսի 1-ից մինչեւ ՀԲՀ-Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվա ավարտը,

16) այն պետությունները, որոնց օրենսդրությամբ գրանցվել կամ արտոնվել է առևտրային նավը եւ որոնք արգելել են իրենց նավերի վրա ԵՌԲԱ ծածկույթների օգտագործումը, տնտեսապես շահում են՝ ՀԲՀ-Կոնվենցիան հնարավորինս շուտ ուժի մեջ մտնելն ապահովելուց, որպեսզի ապահովեն համաշխարհային մակարդակի վրա խաղաղաշու: Սույն Կանոնակարգը, որով անդամ պետություններին արգելվում է կիրառել ԵՌԲԱ ծածկույթները, դրդում է պետությունների կողմից ՀԲՀ կոնվենցիայի վավերացումը,

17) սույն Կանոնակարգում օգտագործվող սահմանումները եւ պարտադրված պահանջները պետք է հնարավորինս հիմնված լինեն ՀԲՀ-Կոնվենցիայում օգտագործվող սահմանումների եւ պահանջների վրա,

18) արտասահմանում կառամատույցների վրա կիրառումն ապահովելու համար, սույն Կանոնակարգը նաեւ կիրառվում է անդամ պետության տիրապետության տակ գործող նավերի համար: Այն չի կիրառվում որեւէ պատերազմական նավերի կամ այլ կառավարական նավերի համար, քանի որ այդ նավերը մտնում են ՀԲՀ կոնվենցիայի մեջ,

19) 2003 թվականի հուլիսի 1-ից անդամ պետության դրոշը կրող բոլոր նավերի վրա ակտիվ ԵՌԲԱ ծածկույթների, ինչպես նաեւ այդ օրվանից հետո կիրառվող, փոփոխված կամ փոխարինված հակաբուսապատման համակարգի արգելումը պարտադրելը պետք է լինի փոխադրման արդյունաբերության դրդապատճառը՝ ՀԲՀ կոնֆերանսի թիվ 1 բանաձեւում նշված առաջարկն իրականացնելու համար,

20) նպատակահարմար է հաստատել ՀԲՀ կոնվենցիայում հարցումների եւ հավաստագրման համար նույն ռեժիմը: Սույն Կանոնակարգով, հարցումներ պետք է կատարվեն 400 եւ ավելի տոննանոց նավերի համար, անկախ ճանապարհորդության բնույթից, մինչդեռ 24 մետր կամ ավելի բարձր նավերը, բայց 400 տոննաից ոչ պակաս նավերը միայն պետք է ունենան կանոնակարգի կամ ՀԲՀ կոնվենցիայի հետ

համապատասխանելիության վերաբերյալ հայտարարություն: Համայնքն իրավունք ունի ներկայացնելու այս նավերի համար ներդաշնակ հարցումների ռեժիմ, եթե հետագա փուլում դա անհրաժեշտ լինի,

21) քսանչորս մետրից ցածր երկարությամբ նավերի համար հարկավոր չէ ապահովել հատուկ հարցում կամ հայտարարագիր, քանի որ այս նավերը, որոնք հիմնականում ժամանցի եւ ձկնորսության համար նավեր են, ապահովված են թիվ 76/769/ԵՏՀ Կանոնակարգով,

22) ճանաչվում են սույն Կանոնակարգին համապատասխանող հավաստագրերն ու փաստաթղթերը, ինչպես նաեւ ՀԲՀ կոնվենցիայի կողմից Կողմերին տրված ՀԲՀ հավաստագրերը եւ ՀԲՀ հայտարարությունները,

23) եթե ՀԲՀ կոնվենցիան ուժի մեջ չի մտել նախքան 2007թվականի հունվարի 1-ը, Հանձնաժողովին թույլատրվում է ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնք երրորդ պետության դրոշմ կրող նավերին թույլ կտան ցուցադրել սույն Կանոնակարգի հետ իրենց համապատասխանելիությունը, ինչպես նաեւ միջոցներ՝ այս դրույթների իրականացումը վերահսկելու համար,

24) նավերի վրա ԵՌԲԱ ծածկույթների արգելման եւ ՀԲՀ կոնվենցիայում նշված պահանջների իրականացումը վերահսկելու ամենահարմար ռեժիմը հաստատված է 1995թ. հունիսի 19-ի 95/21/ԵՀ Խորհրդի՝ նավերի անվտանգության, աղտոտման արգելման, ինչպես նաեւ նավի վրա ապրելու եւ աշխատելու պայմանների միջազգային չափանիշների իրագործման վերաբերյալ կանոնակարգումը՝ կապված բեռներ փոխադրելու համար օգտագործվող Համայնքի նավահանգիստների եւ անդամ պետությունների իրավասության ներքո գտնվող ջրերում նավարկելու հետ, իսկ այդ Կանոնակարգում փոփոխություններն արվում են նպատակահարմար ժամկետում: Հաշվի առնելով այդ Կանոնակարգի հատուկ շրջանակը՝ հավասարազոր դրույթներ կիրառվում են միջանկյալ ժամանակահատվածում՝ անդամ պետության

դրոշը կրող նավերի նկատմամբ,

25) սույն Կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ Խորհրդի որոշման համաձայն, որով հաստատվում են Հանձնաժողովին տրված լիազորությունների իրականացման համար ընթացակարգերը,

26) սույն Կանոնակարգի նպատակի իրագործումը գնահատելու համար Հանձնաժողովը զեկուցում է Եվրոպական Պառլամենտին եւ Խորհրդին, ինչպես նաեւ Կանոնակարգում առաջարկում է նպատակահարմար ճշտություններ, եթե անհրաժեշտ է,

27) սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելը թույլատրում է հնարավորինս շուտ արդյունավետորեն արգելել նավերի վրա օրգանոտին բաղադրությունները,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Նպատակը

Սույն Կանոնակարգի նպատակն է նվազեցնել կամ ոչնչացնել ծովային միջավայրի եւ մարդկանց առողջության վրա բացասականորեն ազդող օրգանոտին բաղադրությունների հետեւանքները, որոնք գործում են որպես ակտիվ բիոցիդներ՝ անդամ պետության դրոշը կրող նավերի վրա օգտագործվող հակաբուսապատման համակարգերում, ինչպես նաեւ անդամ պետություններից եկող կամ դեպի այլ անդամ պետություններ նավարկող նավերի վրա՝ անկախ դրոշից:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Կանոնակարգի համար՝

1. «հակաբուսապատման համակարգ» նշանակում է ծածկույթ, ներկ, մակերեսային մշակում, մակերես կամ գործիք, որն օգտագործվում է նավի վրա՝ ոչ ցանկալի օրգանիզմների կցումը վերահսկելու կամ կանխարգելելու համար.
2. «համախառն տոննաժ» նշանակում է «Նավերի տոննաժի չափման վերաբերյալ» միջազգային կոնվենցիայի առաջին հավելվածում, 1969 թվականի Կոնվենցիայում կամ որեւէ հաջորդ Կոնվենցիայում տոննաժի չափման համաձայն հաշվարկված համախառն տոննաժը.
3. «երկարություն» նշանակում է 1966 թվականի «Բեռնման նշագծերի վերաբերյալ» միջազգային կոնվենցիայում սահմանված, դրա վերաբերյալ 1988 թվականին փոփոխված արձանագրության մեջ կամ որեւէ իրավահաջորդ Կոնվենցիայում «երկարությունը».
4. «նավ» նշանակում է ծովային միջավայրում գործող որեւէ տեսակի նավ, որն ընդգրկում է հիդրո-նրբաթիթեղային նավակները, օդով լցված բարձերով մեքենաները, ապարատները, լողացող նավերը, ֆիքսված կամ լողացող հարթակները, պահեստային լողացող միավորները (ՊԼՄ), ինչպես նաեւ արտադրության լողացող պահեստը եւ բեռնաթափման միավորները (ԱԼԲՄ).
5. «ՀԲՀ կոնվենցիա» նշանակում է 2001թվականի հոկտեմբերի 5-ին ընդունված նավերի վրա վնասակար հակաբուսապատման համակարգերի վերահսկման վերաբերյալ Միջազգային կոնվենցիան՝ անկախ դրա ուժի մեջ մտնելուց.
6. «ճանաչված կազմակերպություն» նշանակում է այնպիսի մարմին, որը ճանաչված է նավերի ստուգման եւ ուսումնասիրություններով զբաղվող կազմակերպությունների՝ ընդհանուր կանոնների եւ չափանիշների վերաբերյալ Խորհրդի 1994 թվականի. նոյեմբերի 22-ի թիվ 94/57/ԵՀ կանոնակարգի դրույթների համաձայն, ինչպես նաեւ ծովային վարչությունների համապատասխան գործողությունների համար ճանաչված մարմին.
7. «ՀԲՀ հավաստագիր» նշանակում է ՀԲՀ կոնվենցիայի չորրորդ հավելվածի դրույթներին համապատասխան նավերին տրվող հավաստագիրը, կամ միջանկյալ ժամանակահատվածում սույն Կանոնակարգի երկրորդ հավելվածում հաստատված ձեւաչափի համաձայն տրվող հավաստագիր, երբ այն տրվում է որեւէ անդամ պետության իշխանությունների կամ այդ իշխանությունների անունից գործող ճանաչված կազմակերպության կողմից.

8. «ՀԲՀ հայտարարություն» նշանակում է այնպիսի հայտարարություն, որը կազմվել է ՀԲՀ կոնվենցիայի չորրորդ հավելվածի դրույթների համաձայն, կամ տիրոջ կամ տիրոջ լիազորված գործակալի կողմից միջանկյալ ժամանակահատվածում ստորագրված, ինչպես նաև սույն Կանոնակարգի երրորդ հավելվածում սահմանված ձեռագրի համաձայն կազմված հայտարարություն.

M1

9. «Համապատասխանության եվրոպական ՀԲՀ հայտարարություն» նշանակում է փաստաթուղթ, որը գրանցում է ՀԲՀ կոնվենցիայի առաջին հավելվածի հետ համապատասխանությունը եւ որը ճանաչված կազմակերպությունը տրամադրում է անդամ պետության իշխանությունների անունից.

B

10. «Միջանկյալ ժամանակահատված» նշանակում է 2003թ. հուլիսի 1-ից սկսած եւ մինչեւ ՀԲՀ կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրն ավարտվող ժամանակահատվածը:

Հոդված 3

Շրջանակ

1. Սույն Կանոնակարգը կիրառվում է՝

- ա) անդամ պետության դրոշը կրող նավերի նկատմամբ,
- բ) անդամ պետության դրոշը չկրող, բայց անդամ պետության լիազորությամբ գործող նավերի նկատմամբ, եւ
- գ) անդամ պետության նավահանգիստ կամ ափից այն կողմ գտնվող տերմինալ մտնող այն նավերի նկատմամբ, որոնք չեն համապատասխանում (ա) եւ (բ) կետերին.

2. Սույն Կանոնակարգը չի կիրառվում որեւէ պատերազմական նավի, ծովում օժանդակ նավերի, պետության սեփական կամ պետության կողմից գործածվող այլ նավի, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածում կառավարության ոչ առետրային ծառայության կողմից օգտագործվող նավերի նկատմամբ:

Հոդված 4

Բիոցիդների նման գործող օրգանոտին բաղադրությունների կիրառման արգելումը

2003թ. հուլիսի 1-ից, հակաբուսապատման համակարգերում որպես բիոցիդ գործող օրգանոտին բաղադրությունները նավերի վրա չեն կիրառվում կամ նորից չեն կիրառվում:

Սակայն, միջանկյալ ժամանակահատվածում սույն դրույթը միայն կիրառվում է 3-րդ հոդվածի (1) (ա) կամ (բ) կետերում նշված նավերի նկատմամբ:

Հոդված 5

Բիոցիդների նման գործող օրգանոտին բաղադրությունների կրման արգելումը

1. 2003թ. հուլիսի 1-ից անդամ պետության դրոշը կրելու իրավունք ունեցող նավերը, եւ այն նավերը, որոնց հակաբուսապատման համակարգը կիրառվել է, փոփոխվել կամ փոխարինվել այդ ամսաթվից հետո, նավի վրա կամ արտաքին մասերի եւ մակերեսների վրա չեն կրում հակաբուսապատման համակարգերում բիոցիդների նման գործող օրգանոտին բաղադրությունները, եթե այդ նավերը չեն կրում որպես նման բաղադրությունների համար պատնեշ հանդիսացող ծածկույթ՝ չհամապատասխանող հակաբուսապատման համակարգի հիմքից դրանց հեռացումը կանխարգելու համար:

2. 2008թ. հունվարի 1-3 (1) հոդվածում նշված նավերը կամ նավի ջրային մասի կամ արտաքին մասերի եւ մակերեսների վրա չեն կրում հակաբուսապատման համակարգերում բիոցիդների նման գործող օրգանոտին բաղադրություններ, կամ կրում են որպես նման բաղադրությունների համար պատնեշ հանդիսացող ծածկույթ՝ չհամապատասխանող հակաբուսապատման համակարգի հիմքից դրանց հեռացումը կանխարգելելու համար:

3. Առաջին եւ երկրորդ պարբերությունները չեն կիրառվում ֆիքսված եւ լողացող հարթակների նկատմամբ, ինչպես նաեւ 2003թվականի հուլիսի 1-ից առաջ կառուցված ՊԼՄ-երի եւ ԱԼԲՄ-երի նկատմամբ, որոնք այդ ամսաթվին կամ դրանից հետո չեն եղել նավի չոր մասում:

Հոդված 6

Ուսումնասիրություն եւ հավաստագրում

1. Հետեւյալը կիրառվում է, հաշվի առնելով անդամ պետության դրոշը կրող նավերի վերաբերյալ ուսումնասիրություններն ու դրանց հավաստագրումը.

ա) չորս հարյուր եւ ավելի համախառն տոննաժ ունեցող նավերի համար, բացառությամբ ֆիքսված կամ լողացող հարթակների, ՊԼՄ-երի ու ԱԼԲՄ-երի, հարցումներ են կատարվում եւ այդ նավերը 2003թ. հուլիսի 1-ից հավաստագրվում են առաջին հավելվածում սահմանված պահանջների համաձայն՝ նախքան նավի առաջին գործածումը, կամ երբ հակաբուսապատման համակարգերը փոփոխվում են կամ փոխարինվում,

բ) քսանչորս մետր եւ ավելի երկարությամբ, բայց 400 համախառն տոննաժից պակաս նավերը, բացառությամբ ֆիքսված կամ լողացող հարթակների, ՊԼՄ-երի եւ ԱԼԲՄ-երի, ունենում են ՀԲՀ հայտարարություն՝ 4-րդ եւ 5-րդ հոդվածների հետ համապատասխանելու համար.

Եթե անհրաժեշտություն կա, ապա Հանձնաժողովն այս նավերի համար կարող է հաստատել ներդաշնակեցված ուսումնասիրություն եւ հավաստագրման ռեժիմ: Այդ միջոցը, որը նախատեսված է փոփոխության ենթարկել սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը, ընդունվում է 9 (2) հոդվածում նշված՝ կանոնակարգող ընթացակարգի համաձայն,

գ) Սույն Կանոնակարգի հետ համապատասխանությունն ապահովելու համար անդամ պետությունները կարող են հաստատել հարմար միջոցներ այն նավերի համար, որոնք չեն համապատասխանում (ա) եւ (բ) կետերին:

2. Համապատասխանության վերաբերյալ հավաստագրերի, հայտարարագրերի եւ հայտարարությունների ճանաչման համար կիրառվում է հետեւյալը.

ա) անդամ պետությունները 2003թվականի հուլիսի 1-ից ճանաչում են որեւէ ՀԲՀ հավաստագիր,

M1

բ) (ա)-ում նշված ամսաթվից մեկ տարի անց, անդամ պետությունը ճանաչում է Համապատասխանության վերաբերյալ եվրոպական ՀԲՀ հայտարարությունը,

B

գ) անդամ պետությունները 2003թ. հուլիսի 1-ից ճանաչում են որեւէ ՀԲՀ հայտարարագիր:

Այս հայտարարագրերին կցված են համապատասխան փաստաթղթեր (օրինակ՝ ստացական կամ անդորրագիր), կամ դրանք համապատասխան փոխանցագիր են պարունակում:

M2

3. Եթե ՀԲՀ կոնվենցիան ուժի մեջ չի մտել մինչև 2007թվականի հունվարի 1-ը, Հանձնաժողովը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ նավերին 5-րդ հոդվածի հետ համապատասխանելու հնարավորություն տալու համար: Այն միջոցները, որոնք նախատեսված են փոփոխելու սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը, ընդունվում են 9 (2) հոդվածում նշված՝ կանոնակարգող ընթացակարգի համաձայն:

B

Հոդված 7

Պետության կողմից նավահանգստի վերահսկողություն

Անդամ պետությունները միջանկյալ ժամանակահատվածում կիրառում են 400 համախառն տոննաժով նավերի համար թիվ 95/21/ԵՀ կանոնակարգում սահմանված վերահսկողության դրույթներին համարժեք եւ անդամ պետության դրոշը կրող նավերի համար դրույթներ: Ինչ վերաբերում է խախտումների ստուգմանը եւ նկատմանը, անդամ պետություններն առաջնորդվում են ՀԲՀ կոնվենցիայի 11-րդ հոդվածի դրույթներով:

M2

Եթե ՀԲՀ կոնվենցիան մինչև 2007թվականի հունվարի 1-ը ուժի մեջ չի մտել, ապա Հանձնաժողովն այս վերահսկողության համար համապատասխան ընթացակարգեր է հաստատում: Այն միջոցները, որոնք նախատեսված են փոփոխելու սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը, ընդունվում են 9(2) հոդվածում նշված՝ կանոնակարգող ընթացակարգի համաձայն:

Հոդված 8

Միջազգային մակարդակում, մասնավորապես՝ Ծովային միջազգային կազմակերպության զարգացումները հաշվի առնելու համար, կամ փորձի հիման վրա սույն Կանոնակարգի արդյունավետությունը բարելավելու համար, Հանձնաժողովը կարող է փոփոխել ՀԲՀ կոնվենցիայում, ՀԲՀ հավաստագրի, ՀԲՀ հայտարարագրի, Համապատասխանության

վերաբերյալ ՀԲՀ հայտարարության եւ սույն Կանոնակարգի հավելվածների մեջ արված նշումները՝ ներառյալ ՀԲՀ կոնվենցիայի 11-րդ հոդվածի վերաբերյալ ԾՄԿ-ի համապատասխան ուղեցույցները: Այն միջոցները, որոնք նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, ընդունվում են 9 (2) հոդվածում նշված՝ կանոնակարգող ընթացակարգի համաձայն:

Հոդված 9

Կոմիտեի ընթացակարգը

1. Հանձնաժողովին օժանդակում է Եվրոպական Պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2099/2002 (ԵՀ) կանոնակարգի 3-րդ հոդվածով հաստատված՝ Անվտանգ ծովերի եւ նավերից առաջացող աղտոտումը կանխարգելող կոմիտեն:
2. Եթե սույն պարբերությանը հղում է արվում, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա (1)-(4) հոդվածը եւ 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով 8-րդ հոդվածի դրույթները:

B

Հոդված 10

Գնահատումը

Հանձնաժողովը մինչեւ 2004թ. մայիսի 10-ը Եվրոպական Պառլամենտ եւ Խորհուրդ ՀԲՀ կոնվենցիայի վավերացման վերաբերյալ զեկույց է ներկայացնում եւ ապահովում է տեղեկատվություն՝ Համայնքային նավահանգիստներից կամ դեպի նավահանգիստներ գործող եւ անդամ պետության դրոշը կրող նավերի՝ հակաբուսապատման համակարգերում բիոցիդների նման գործող օրգանոտին բաղադրությունների օգտագործման չափի վերաբերյալ: Այս զեկույցում, անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովը կարող է փոփոխություններ առաջարկել՝ անդամ պետությունների իրավասության ներքո ջրերում վնասակար, հակաբուսապատման բաղադրությունների ներկայությանը նպաստող, անդամ պետության դրոշը չկրող նավերին նպաստող արագացված նվազեցումն ապահովելու համար:

Հոդված 11

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից հետո:

Սույն Կանոնակարգն ամբողջովին պարտադիր է եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

**Անդամ պետության դրոշը կրող նավերում հակաբուսապատման համակարգերի
համար ուսումնասիրությունների եւ հավաստագրման համար ներկայացվող
պահանջները**

1. Ուսումնասիրություններ

- 1.1. 2003թվականի հուլիսի 1-ից, 400 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող նավերը, բացառությամբ ֆիքսված կամ լողացող հարթակների, ՊԼՄ-երի եւ ԱԼԲՄ-երի, ենթարկվում են հետետյալին. նախնական ուսումնասիրություն՝ նավի գործածությունից առաջ, կամ երբ նավն առաջին անգամ գտնվում է չոր մասում՝ հակաբուսապատման համակարգերի կիրառման համար, եւ ուսումնասիրություն, երբ հակաբուսապատման համակարգերը փոխվում են կամ փոխարինվում: Նման ուսումնասիրությունները հաստատվում են 2.1 կետով պահանջված հավաստագրում:
- 1.2. Ուսումնասիրությունը լինում է այնպես, որ ապահովի նավի հակաբուսապատման համակարգի համապատասխանությունը սույն Կանոնակարգի չորրորդ եւ հինգերորդ հոդվածների հետ:
- 1.3. Ուսումնասիրությունները կատարվում են անդամ պետության իշխանությունների կողմից պատշաճորեն լիազորված պաշտոնյաների կողմից, կամ ՀԲՀ կոնվենցիայի կողմից, կամ այդ իշխանություններից մեկի կողմից առաջադրված ուսումնասիրություն անցկացնողի, կամ իշխանությունների անունից գործող ճանաչված կազմակերպության կողմից:
- 1.4. Եթե այլ բան չի նախատեսվում սույն Կանոնակարգով, 1.1-ում նշված ուսումնասիրությունների համար անդամ պետությունները հետետում են ՀԲՀ կոնվենցիայի չորրորդ հավելվածում սահմանված պահանջներին, ինչպես նաեւ թիվ 102 (48) ԾՄՊԿ (MEPC) որոշման՝ նավերի վրա հակաբուսապատման համակարգերի վերաբերյալ ուսումնասիրությունների եւ հավաստագրման համար ուղենիշերը, որոնք ընդունվել են 2002թվականի հոկտեմբերի 11-ին Ծովային միջազգային

կազմակերպության Ծովային միջավայրի պաշտպանության կոմիտեի կողմից:

2. Հավաստագրում.

2.1. 1.1(ա) կամ (բ) կետում նշված ուսումնասիրության ավարտից հետո այն անդամ պետությունը, որը դեռեւս կողմ չէ ՀԲՀ կոնվենցիային, հավաստագիր է տրամադրում՝ 2-րդ հավելվածում սահմանված ձեւաչափի համաձայն: ՀԲՀ կոնվենցիային կողմ հանդիսացող անդամ պետությունը տրամադրում է ՀԲՀ հավաստագիր:

2.2. Անդամ պետությունը կարող է հավատալ Համապատասխանության վերաբերյալ հայտարարությանը՝ սույն Կանոնակարգի չորրորդ եւ հինգերորդ հոդվածների պահանջներին համապատասխանելու համար: 2.1 կետում նշված հավաստագիրը փոխարինում է ՀԲՀ հայտարարությանը՝ 1.1 կետում նշված ամսաթվից ամենաուշը մեկ տարի հետո:

2.3. Անդամ պետությունները պահանջում են, որ 1.1 կետում նշված նավը կրի 2.1 կետին համաձայն տրամադրված հավաստագիր:

2.4. 2.1 կետում նշված հավաստագրման նպատակով անդամ պետությունները հետեւում են ՀԲՀ կոնվենցիայի 4-րդ հավելվածում սահմանված պահանջներին:

Հավաստագրի ձեւերը եւ հակաբուսապատման համակարգերի գրանցումը

Միջազգային հավաստագիրը եւ հակաբուսապատման համակարգերի գրանցումը կազմվում է հետեւյալ կերպ.

Եթե այս ձեւաթղթերն օգտագործվում են միայն այն նավերի համար, որոնք չեն համապատասխանում ՀԲՀ կոնվենցիայի չորրորդ հավելվածի առաջին կանոնակարգում ուսումնասիրությունների եւ հավաստագրման վերաբերյալ պահանջներին, ապա ՀԲՀ կոնվենցիային արված հղումները կարող են ջնջվել:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱԲՈՒՍԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

(Սույն հավաստագրին ավելացվում է հակաբուսապատման համակարգերի գրանցումը)

(Պաշտոնական կնիք) (Պեղումներ)

Տրված է նավերի վրա վնասակար, հակաբուսապատման համակարգերի վերաբերյալ Միջազգային կոնվենցիայի դրույթների, ինչպես նաեւ Եվրոպական Պառլամենտի եւ Խորհրդի՝ նավերի վրա օրգանոտին բաղադրությունների արգելման վերաբերյալ թիվ 782/2003 Կանոնակարգի դրույթների համաձայն

Տրվում է

(պեղումայան անունը)

կողմից

.....

(լիազորված անձի կամ կազմակերպության կողմից)

Եթե հավաստագիրը նախապես տրվել է, սույն հավաստագիրը փոխարինում էամսաթվով հավաստագրին

Նավի առանձնահատկությունները (2)

Նավի անվանումը՝

Տառերը տարբերող թիվը՝

Գրանցման նավահանգիստը՝

Համախառն տոննաժը՝

ԾՄԿ թիվ ⁽³⁾

Սույն նավի կառուցման ընթացքում եւ դրանից հետո չի կիրառվել Կոնվենցիայի 1-ին հավելվածի եւ թիվ 782/2003 (ԵՀ) կանոնակարգի համաձայն վերահսկվող հակաբուսապատման համակարգ:

Սույն նավի վրա կիրառվել է Կոնվենցիայի 1-ին հավելվածի եւ թիվ 782/2003 (ԵՀ) կանոնակարգի համաձայն հակաբուսապատման համակարգ, բայց հեռացվել է(նշեք կառույցի անվանումը)ամսաթվին:

Սույն նավի վրա նախապես կիրառվել է Կոնվենցիայի 1-ին հավելվածի եւ թիվ 782/2003 (ԵՀ) կանոնակարգի համաձայն հակաբուսապատման համակարգ, բայց այն ծածկվել է-ի (նշեք կառույցի անվանումը) կողմից(ամսաթվին) ծածկույթով:

Սույն նավի վրա 2003թ. հունվարի 1-ից առաջ կիրառվել է Կոնվենցիայի 1-ին հավելվածի եւ թիվ 782/2003 (ԵՀ) կանոնակարգի համաձայն հակաբուսապատման համակարգ, բայց այն 2008թ. հունվարի 1-ից առաջ պետք է հեռացվի կամ ծածկվի ծածկույթով:

(¹) Կարող է ջնջվել այն նավերի համար, որոնք չեն ներկայացվել ուսումնասիրությունների համար եւ չեն բավարարում ՀԲՀ կոնվենցիայի չորրորդ հավելվածի՝ հավաստագրման վերաբերյալ պահանջները:

(²) Որպես այլընտրանք՝ նավի առանձնահատկությունների մասին տվյալները կարող են տուփերում դրվել հորիզոնական դիրքով:

(³) Ըստ Ծովային միջազգային կազմակերպության կողմից ընդունված Նավերի նույնականացման համար թվային ծրագրի:

ՍԱ ՀԱՎԱՍՏՈՒՄ Է, ՈՐ

1. նավը ստուգվել է Կոնվենցիայի 4-րդ հավելվածի 1-ին կանոնակարգի եւ նավերի վրա օրգանոտին բաղադրություններն արգելելու մասին 2003 թվականի ապրիլի 14-ի Եվրոպական Պառլամենտի եւ Խորհրդի թիվ 782/2003 (ԵՀ) կանոնակարգի համաձայն, եւ

2. ուսումնասիրությամբ ցույց է տրվում, որ նավի վրա հակաբուսապատման համակարգը համապատասխանում է նավերի վրա օրգանոտին բաղադրությունների արգելման վերաբերյալ Կոնվենցիայի առաջին հավելվածի, ինչպես նաև 2003թվականի ապրիլի 14-ի Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 782/2003 (ԵՀ) կանոնակարգի կիրառելի պահանջներին:

Տրվել է'.....
.....

(Հավաստագրման տրամադրման վայրը)

.....
.....

(Տրամադրման ամսաթիվը) (Հավաստագիրը տրամադրող լիազորված պաշտոնյայի ստորագրությունը)

Տրվող հավաստագրի հիման վրա արված հարցման ավարտի ամսաթիվը.....

(¹) Կարող է ջնջվել այն նավերի համար, որոնք չեն ներկայացվել ուսումնասիրությունների համար և չեն բավարարում ՀԲՀ կոնվենցիայի չորրորդ հավելվածի՝ հավաստագրման վերաբերյալ պահանջները:

ՀԱԿԱՔՈՒՍԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Սույն գրանցումը մշտապես կցված է Հակաբուսապատման համակարգի միջազգային հավաստագրին:

Նավի առանձնահատկությունները.

Նավի անվանումը՝

Տարբերակող թիվ կամ տառեր՝

ԾՄԿ-ի թիվը՝

Հակաբուսապատման համակարգի (համակարգերի) կիրառվող մասերը՝

Օգտագործվող հակաբուսապատման համակարգի (համակարգերի) մասը (մասերը)՝

Հակաբուսապատման համակարգի (համակարգերի) կիրառման ամսաթիվը(թվերը)՝

Ընկերության (ընկերությունների) անվանումը (անվանումները), ինչպես նաև կառույցի (կառույցների) եւ վայրի (վայրերի) անվանումը (անվանումները), որտեղ կիրառվում է՝

Հակաբուսապատման համակարգը պատրաստողի (պատրաստողների)

անվանումը (անվանումները)

Հակաբուսապատման համակարգի (համակարգերի)

անվանումը(անվանումները) եւ գույնը (գույները)՝

Ակտիվ բաղադրիչը (բաղադրիչները) եւ դրանց Քիմիական նյութերի շարադրողական ծառայության գրանցման թիվը (ՔՆՇԾ թիվը (թվերը))՝

Ծածկոյթի տեսակը (տեսակները)

Եթե գոյություն ունի՝

Կիրառվող ծածկոյթի անվանումը (անվանումները)

եւ գույնը (գույները), եթե գոյություն ունի՝

Ծածկոյթի կիրառման ամսաթիվը՝

ՍԱ ՎԿԱՅՈՒՄ Է, որ սույն գրանցումը ճիշտ է բոլոր առումներով:

Տրվել է՝.....

(Գրանցումը տրամադրելու վայրը)

.....

.....

(Տրամադրման ամսաթիվը)

.....

(Գրանցումը տրամադրող լիազորված պաշտոնյայի ստորագրությունը)

.....

Գրանցումների հաստատումը (!)

ԱՍ ՎԿԱՅՈՒՄ է, որ նավերի վրա օրգանոտին բաղադրությունների արգելման վերաբերյալ Կոնվենցիայի չորրորդ հավելվածի առաջին Կանոնակարգի, ինչպես նաև 2003թ. ապրիլի 14-ի Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի՝ թիվ 782/2003 (ԵՀ) Կանոնակարգի առաջին հավելվածի 2.1 (2) կետի համաձայն պահանջվող ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նավը համապատասխանում է [Կոնվենցիայի և Կանոնակարգի] պահանջներին:

Կիրառվող հակաբուսապատման համակարգի (համակարգերի) մանրամասները՝

Օգտագործվող հակաբուսապատման համակարգի (համակարգերի) տեսակը (տեսակները)՝

Հակաբուսապատման համակարգի (համակարգերի) կիրառման ամսաթիվը (ամսաթվերը)՝

Ընկերության (ընկերությունների) անվանումը (անվանումները), ինչպես նաև կառույցի(կառույցների) և վայրի(վայրերի) անվանումը (անվանումները), որտեղ կիրառվում է՝

.....
.....

Հակաբուսապատման համակարգը պատրաստողի (պատրաստողների) անունը(անունները)՝

.....

Հակաբուսապատման համակարգի(համակարգերի) անվանումը(անվանումներ) և գույնը(գույները)՝

.....

Ակտիվ բաղադրիչը (բաղադրիչները) և իրենց ՔՆՇԾ թիվը (թվերը)

.....

Ծածկույթի տեսակը (տեսակները), եթե գոյություն ունի՝

.....
.....

Կիրառվող ծածկույթի անվանումը(անվանումները) և գույնը (գույները), եթե գոյություն ունի՝

Ծածկույթի կիրառման ամսաթիվը.....

Ստորագրվել է՝

(Գրանցումը տրամադրող լիազորված պաշտոնյայի ստորագրությունը)

Վայրը՝

.....
.....

Ամսաթիվը՝

.....
.....

(Լիազորության կնիք կամ դրոշմ)

(¹) Գրանցման այս էջը վերարտադրվում է եւ ավելացվում գրանցմանը, ինչպես
ղեկավարությունը համարում է անհրաժեշտ:

(²) Կարող է ջնջվել այն նավերի համար, որոնք չեն ներկայացել ուսումնասիրությունների
համար եւ չեն բավարարում ՀԲՀ կոնվենցիայի չորրորդ հավելվածի՝ հավաստագրման
վերաբերյալ պահանջները:

(³) Սույն հաստատման հիման վրա կատարված ուսումնասիրության ավարտի օրը:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

24 ՄԵՏՐ ԿԱՄ ԱՎԵԼԻ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ, ԲԱՅՑ ՈՉ ՊԱԿԱՍ, ՔԱՆ 400 ՀԱՄԱԽԱՌՆ ՏՈՆՆԱԺՈՎ ՆԱՎԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱԿԱԲՈՒՍԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Կազմվել է ըստ

Օրգանոտին բաղադրությունների արգելման վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 14-ի Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի՝ թիվ 782/2003 (ԵՀ) Կանոնակարգի

Նավի անվանումը՝

Տարբերակող թիվը կամ տառերը՝

Գրանցման նավահանգիստը՝

Երկարությունը՝

Համախառն տոննաժը՝

ԾՄԿ թիվը (եթե գոյություն ունի)

Հայտարարում եմ, որ նավի վրա օգտագործվող հակաբուսապատման համակարգը համապատասխանում է օրգանոտին բաղադրությունների արգելման վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 14-ի Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի՝ թիվ 782/2003 (ԵՀ) Կանոնակարգի չորրորդ և հինգերորդ հոդվածներին:

.....
.....

(Ամսաթիվ) (Տիրոջ կամ տիրոջ լիազորված գործակալի ստորագրությունը)

Կիրառվող հակաբուսապատման համակարգի/երի/ հաստատումը

Օգտագործվող հակաբուսապատման համակարգի/երի/ տեսակը/ները/ և կիրառման ամսաթիվը/թվերը՝

.....
.....

(Ամսաթիվը) (Տիրոջ կամ տիրոջ լիազորված գործակալի ստորագրությունը)

Օգտագործվող հակաբուսապատման համակարգի (համակարգերի) տեսակը (տեսակները)
եւ կիրառման ամսաթիվը (թվերը)

.....
.....

(Ամսաթիվը) (Տիրոջ կամ տիրոջ լիազորված գործակալի ստորագրությունը)

Օգտագործվող հակաբուսապատման համակարգի(համակարգերի) տեսակը (տեսակները)
եւ կիրառման ամսաթիվը (թվերը)՝

.....
.....

(Ամսաթիվը) (Տիրոջ կամ տիրոջ լիազորված գործակալի ստորագրությունը)

ՊՏ C 262 E, 29.10.2002թ., էջ 492:

2) 2002 թվականի դեկտեմբերի 11-ին ներկայացված եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

3) 2002 թվականի նոյեմբերի 20-ին Եվրոպական պառլամենտի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

4) ՊՏ L 183, 12.07.2002թ., էջ 58:

5) ՊՏ L 262, 27.09.1976թ., էջ 201 Վերջին անգամ Հանձնաժողովի 2003/3 (ԵՀ) հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 4, 09.01.2003թ., էջ 12):

6) ՊՏ L 157, 07.07.1995թ., էջ 1: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002/84/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 53):

7) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

8) ՊՏ L 319, 12.12.1994, էջ 20: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002/84/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ:

9) ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 1: